2023-2024 ուստարի

Շիրակի մարզի Վ. Թեքեյանի անվան

Գյումրու համար 2 ավագ դպրոց

12 դասարան

Դասղեկի աշխատանքային պլան

դասղեկ՝ Հ. Հարությունյան

Դասարանի բնութագիրը

Դասարանը բաղկացած է 16 աշակերտներից, որից 6-ը աղջիկ են, 10-ը տղա: Աշակերտներից յուրաքանչյուրը ունի բնավորության առանձնահատուկ գծեր,միևնույն ժամանակ դասարանում տիրում է համերաշխ մթնոլորտ, բոլորը ընկերասեր են, միշտ փորձում են օգտակար լինեն միմյանց: Դասարանում ունենք նաև դժվար դաստիարակվող աշակերտներ, որոնց հետ տարվում է հատուկ և առանձնացված աշխատանք վարքը շտկելու նպատակով:Հատուկ մոտեցում կա նաև տարբեր տեսակի կարիքներ ունեցող աշակերտների նկատմամբ:Կարիք կա ավելացնել աշակերտների մոտիվացիան, որը կնպաստի առաջադիմության բարձրացմանը:

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Աշակերտների մոտ սերմանել համերաշխություն, ընկերասիրություն, ազնվություն:Տարբեր կարիքներ ունեցող աշակերտների հետ կազմակերպել անհատական աշխատանքներ: Համագործակցել ծնողների հետ աշակերտների ուսումնադաստիարակչական հարցերում:

Աշակերտների իդեալը դարձնել բարին ու վեհը, ազնիվն ու արդարը:

Էքսկուրսիաների, միջոցառումների, արվեստի համաշխարհային ճանաչում ունեցող գործերի միջոցով երեխաների մոտ զարգացնել գեղեցիկն ու սքանչելին տեսնելու կարողությունները:

Աշակերտների մոտ սերմանել պատասխանատվություն, աշխատասիրություն և ամենակարևորը հայրենասիրություն:

Որպես ավարտական դասարան շատ են կազմակերպչական հարցերը, որոնց լուծման համար կարևոր է ծնողների ներգրավածությունը:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

1 կիսամյակ

1. Գիտելիքի և խաղաղության օր
2. Դասարանական ժողով – կարգապահական և կազմակերպչական հարցերի քննարկում, ուսումնական տարվա անելիքների պլանավորում
3. Զրույց աշակերտների հետ – ծնողներս ինձ համար ես՝ ծնողիս
4. Զրույց աշակերտների հետ – հայրենիքը վեր է ամեն ինչից
5. Ծնողական ժողով
6. Այցելություն կինոթատրոն
7. Զրույց աշակերտների հետ – պատերազմը չարիք է
8. Զրույց աշակերտների հետ – սովորենք իրար հասկանալ
9. Այցելություն թանգարան
10. Զրույց աշակերտների հետ – ժամանակակից աշխարհի հիմնախնդիրները
11. Բացատրական և ծանուցման աշխատանքներ կապված պետական ավարտական քննությունների հետ
12. Ընթացիկ հարցերի քննարկում իրավիճակին համապատասխան
13. Ծնողական ժողով
14. 1-ին կիսամյակի չկատարված խնդիրների քննարկում

2րդ կիսամյակ

15. 1ին կիսամյակի արդյունքների ամփոփում
16. Զրույց աշակերտների հետ – ծննդյան տոներից հետո
17. Զրույց աշակերտների հետ – ինքնազարգացման իմ ուղին
18. Զրույց աշակերտների հետ – բանակի օրվան նվիրված
19. Զրույց աշակերտների հետ – մարդկային ճիշտ վերաբերմունքի նորմերը
20. Բանավեճ, թեման ընտրում են աշակերտները
21. Ծնողական ժողով
22. Զրույց աշակերտների հետ – մեր արեգակ մայրերը
23. Նախապատրաստական աշխատանքներ ավարտական միջոցառման համար
24. Զբոսանք – մեր շրջապատի բնության հրաշքները
25. Նախապատրաստական աշխատանքներ ավարտական միջոցառման համար
26. Զրույց աշակերտների հետ – ովքեր են իմ ընկերները
27. Նախապատրաստում պետական ավարտական քննություններին
28. Նախապատրաստական աշխատանքներ ավարտական միջոցառման համար
29. Դասարանական ժողով-կազմակերպչական հարցերի քննարկում
30. <<Վերջին Զանգ>> -միջոցառում